ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/015

ք. Երևան

«18» Ապրիլ 2019թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս Գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Գրիգորյանի, որը գործում է «Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8100000 (ութ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ՀՀ, ք.Երևան, 0010, Ագաթանգեղոսի 29, բն.8
ՀՎՀՀ 02647057	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016,	Հ/Հ 2050022369951001
Հ/Հ 900011054013, Հ/Հ 900013000790	ՀՎՀՀ 02708088
ՀՀ ՊԵՆ աշխատակազմի	Տնօրեն
գործառնական վարչություն	
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Դ. Գրիգորյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 18 » Ապրիլ 2019թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/015 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	միավորի գինը/ ՀՀ Դրամ	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման 50711100/501	**Տեխնիկական պահանջներ**		դրամ	8100000	1	Հասցեները ներկայացված են կից աղյուսակ 1-ում	Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. դեկտեմբերի 15-ը
		Tiso մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք (Турникет)						
		Մուտք և ելք վերահսկող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	680000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	120000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	27000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	5000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000					
		Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ C3-200-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	105000					
		Քարտ կարդացող մոդուլ KR201-E / KR600E-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000					
		Առանց մարտկոցի հնարավորության հոսանքի	10000					

		սնուցման բլոկի (12Վ, 5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը						
		Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	9500					
		Հոսանքի անխափան սնուցման բլոկի (Mercury Elite 1500 Pro) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	60000					
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000					
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	4500					
		USB-ով քարտ գրանցող սարքի CR10E փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	18000					
		Քարտ առանց տպագրության	400					
		Քարտ գունավոր տպագրությամբ	900					
		Perco մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք (Турникет)						
		Մուտք և ելք վերահսկող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	680000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	120000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	27000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	5000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000					
		Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ C3-200-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	105000					
		Քարտ կարդացող մոդուլ KR201-E / KR600E-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000					
		Առանց մարտկոցի հնարավորության հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	10000					
		Առանց մարտկոցի հնարավորության հոսանքի	14000					

		սնուցման բլոկի (24Վ, 5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը							
		Մարտկոցի հնարավորությամբ հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 10Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	27000						
		Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	9500						
		Հոսանքի անխափան սնուցման բլոկի (Mercury Elite 1500 Pro) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	60000						
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000						
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	4500						
		USB-ով քարտ գրանցող սարքի CR10E փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	18000						
		Քարտ առանց տպագրության	400						
		Քարտ գունավոր տպագրությամբ	900						
		Tansa մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք (Турникет)							
		Մուտք և ելք վերահսկող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	680000						
		Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	120000						
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	27000						
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000						
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	5000						
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000						
		Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ C3-200-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	105000						
		Քարտ կարդացող մոդուլ KR201-E / KR600E-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000						
		Առանց մարտկոցի հնարավորության հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 5Ա) փոխարինում/տեղադրում,	10000						

		ներառյալ նշված ապրանքը						
		Առանց մարտկոցի հնարավորության հոսանքի սնուցման բլոկի (24Վ, 5Ա) փոխարինում/տեղադրում,	10000					
		ներառյալ նշված ապրանքը						
		Հոսանքի անխափան սնուցման բլոկի (Mercury Elite 1500 Pro) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	60000					
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000					
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	4500					
		USB-ով քարտ գրանցող սարքի CR10E փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	18000					
		Քարտ առանց տպագրության	400					
		Քարտ գունավոր տպագրությամբ	900					
		Ellips մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք (Турникет)						
		Մուտք և ելք վերահսկող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	680000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	120000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	27000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	5000					
		Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000					
		Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ C3-200-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	105000					
		Քարտ կարդացող մոդուլ KR201-E / KR600E-ի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	28000					
		Մարտկոցի հնարավորությամբ հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 10Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	27000					
		Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	9500					

		Հոսանքի անխափան սնուցման բլոկի (Mercury Elite 1500 Pro) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	60000					
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	22000					
		Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	4500					
		USB-ով քարտ գրանցող սարքի CR10E փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը	18000					
		Քարտ առանց տպագրության	400					
		Քարտ գունավոր տպագրությամբ	900					
		Կատարողը պարտավոր է իրականացնել աղյուսակ 1-ում նշված հասցեներում տեղադրված սարքավորումներում առաջացած խնդիրների ուսումնասիրություն և առկայության դեպքում դրանց վերացում (խափանված սարքավորման կամ դետալի վերանորոգում/սպասարկում և այլ գործառույթներ որոնք ուղղված կլինեն առաջացած խնդրի լուծմանը, նշված եղանակով խնդրի լուծման անհնարին լինելու պատճառով խափանված սարքավորումները կամ դետալները կփոխարինվեն նորով՝ տեխնիկական սպասարկման ցանկում առկա սարքավորումներով կամ դետալներով նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ), սարքի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով: Կատարողը նաև պարտավոր է իրականացնել սպասարկման գործողություններ մասնավորապես՝ յուղում, մաքրում, ձգում, կարգաբերում, որն էլ կնպաստի սարքերի անխափան աշխատանքին: Կատարողը սպասարկման ընթացքում պարտավոր է ապահովել ժամանակավոր սարքով մինչև անսարքության վերացումը (բացի մուտք և ելք վերահսկող սարքից): *Նշված ծառայության միավորի գինը պետք է տրամադրվի Աղյուսակ 1-ում գտնվող բոլոր մուտք և ելք վերահսկող սարքերի(турникет) համար ամսեկան կտրվածքով:	350000					

* Պատվիրատուի պահանջով Ծառայություն մատուցողը պարտավոր է ապահովել մուտք և ելք վերահսկող սարքերի համար անհրաժեշտ քարտերը (գունավոր տպագրությամբ/առանց տպագրության): Քարտի վրա տպագրության համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում է Պատվիրատուի կողմից:

** Անհրաժեշտ պայմաններ՝

- Ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվում 2019 թվականի դեկտեմբերի 15-ը:
- Ծառայություն մատուցողը պարտավոր է բացի ծանուցման հիմքով կատարվող աշխատանքներից՝ պարբերաբար, առնվազն երեք ամիսը մեկ իրականացնել սարքավորումների պրոֆիլակտիկ սպասարկում:

- Վերը նշված կետում պրոֆիլակտիկ սպասարկման ընթացքում սարքավորումների աշխատանքի մեջ խնդիրներ հայտնաբերելու դեպքում սեփական նախաձեռնությամբ իրականացնել դրանց վերանորոգումը՝ սույն տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններով և ժամկետներում:
- Արձագանքման ժամանակը Ծառայություն մատուցող ընկերությունը պետք է ձեռնարկի համապատասխան գործողություններ Պատվիրատուի կողմից տեղեկատվությունը Ծառայություն Մատուցող ընկերության էլ. փոստի վրա ստանալուց կամ Ծառայություն Մատուցող ընկերությանը հեռախոսով ահազանգելուց հետո առավելագույնը 24 ժամվա ընթացքում:
- Վերանորոգումը իրականացվում է պատվիրատուի ահազանգը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ վերանորոգումն իրականացնելու համար պահեստամասի բացակայության և դրա պատվերի ուշացման դեպքերի, որի ժամանակ պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ ժամկետ:
- Ծառայություն մատուցողը պարտավոր է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը 25 աշխատանքային օրվա ընթացքում լուծել համակարգում առկա խնդիրները:
- Կատարված աշխատանքների ավարտից հետո՝ նույն օրը Ծառայություն մատուցողը պարտավոր է կազմել տեղեկանք կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնել պատասխանատու ստորաբաժանմանը(ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչություն):
- Փոխարինվող պահեստամասերը և սարքերը պետք է գտնվեն գործարանային չօգտագործված վիճակում:
- Փոխարինվող պահեստամասերի և սարքերի համար սահմանվում է 1 տարի երաշխիք:

*** Ծառայությունների մատուցման վայրերը, սարքերի մակնիշները և քանակը (Աղյուսակ 1)՝

ՀՀ	Ծառայություն մատուցելու վայր	Մակնիշ	Քանակ
1.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին,խոշոր հարկ վճարողների ՀՏ,Արաբկիրի ՀՏ,Ուսումնական կենտրոն,ք.Երևան,Կոմիտաս 35	Tiso	1
2.	Էրեբունու ՀՏ,ք.Երևան,Ս.Դավիթի 87ա	Tiso	2
3.	Նոր-Նորքի ՀՏ,Ք.Երևան,Մոլդովական 41/3	Tiso	1
4.	Շենգավիթի ՀՏ,Ք.Երևան,Մանթաշյան փ. 55	Tiso	1
5.	Գյումրու ՏՀՏ,ք.Գյումրի, Հովսեփյան-1ա	Tiso	1
6.	Սևանի Տ.Հ.Տ., Ք.Սևան,Սայաթ Նովա 1/1	Perco	1
7.	ՀՀ ՊԵԿ, Ուսումնական կենտրոն,ք.Երևան,Ահարոնյան փող. 12/3	Tiso	1
8.	ՀՀ ՊԵԿ վերադաս մարմին,Կենտրոնի ՀՏ,ք.Երևան,Դեղատան 3	Tansa	2
9.	Մաշտոցի ՀՏ,ք.Երևան,Շինարարների փ. 3ա	Ellips	1
10.	ՀՀ Պեկ ք.Երևան,Խորենացու 3,7	Tansa, Ellips	4
11.	Արաբատյան Մաքսատուն ք.Երևան,Ծովակալ Իսակովի 10	Ellips	2
12.	Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների Մ/ՄՏ,Ք.Երևան,Արշակունյաց 127/21	Ellips	1
13.	Աշտարակի ՏՀՏ,ք.Աշտարակ,Պռոշյան 29	Ellips	1
14.	Հրազդանի ՏՀՏ,ք.Հրազդան,Սպանդարյան փ. 24/1	Ellips	1
15.	Արտաշատի ՏՀՏ,ք.Արտաշատ,Օգոստոսի 23,83	Ellips	1
16.	Վանաձորի Տ.Հ.Տ., Ք.Վանաձոր,Վարդանանց 11	Ellips	1
17.	Շիրակի տարածաշրջանային ՄՏ,ք.Գյումրի,Խորենացի 21	Tansa	1
18.	Աբովյան ՀՏ Ք.Աբովյան,Բարեկամության հրապարակ	Ellips	1
19.	Իջևանի Տ.Հ.Տ.,Ք.Իջևան, Անկախության 12	Tansa	1
20.	Կապանի Տ.Հ.Տ.,Ք.Կապան,Մինասյան փ. 20ա	Tansa	1
21.	Գավառի ՏՀՏ,ք.Գավառ,Գրիգոր Լուսավորչի 12/2	Tansa	1
22.	Գորիսի ՀՏ, ք.Գորիս, Տաթևացի 9	Tansa	1

23.	Եղեգնաձորի ՏՀՏ,ք.Եղեգնաձոր,Նարեկացի 8/3	Tansa	1
24.	Սյունիքի ՏՄ ք. Սիսիան-Երևան մայրուղի 7-րդ կմ	Tansa	1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016,
Հ/Հ 900011054013, Հ/Հ 900013000790
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, 0010, Ագաթանգեղոսի 29, բն.8
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022369951001
ՀՎՀՀ 02708088
Տնօրեն

Դ. Գրիգորյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված 2
« 18 » Ապրիլ 2019թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/015 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
« 18 » Ապրիլ 2019թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/015 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն